



# PEARLS OF ARMENIAN HERITAGE

## Հայ Թատրոնի Ծագումը (17-րդ Դար)

Արդի հայ գրականության մէջ, թատրոնը իբրև գրական սեռ մշակուած է արեւմտեան Եւրոպայի ազդեցութեան տակ: Վարժարաններուն ուսումնական ծրագիրներուն էական մաս կը կազմէր բեմադրական եւ բեմբասացութեան արուեստին մշակումը: Հին դարերուն վերաբերեալ կան պատմական ակնարկներ՝ հայոց մէջ թատերական արուեստին գոյութեան, եւ Յովհան Մանդակունի հայրապետին իր ճառերով մղած պայքարը այդ արուեստին դէմ անվիճելի ապացոյց է ժողովուրդին մէջ թատրոնին վայելած համակրութեան:

Արդի ժամանակներուն՝ 1668-ին առաջին բեմադրութիւնն է **Հռիփսիմէ** ողբերգութիւնը (հրատարակուած է “Բազմավէպ”ի մէջ, 1884-1886 տարիներու): Լեւայերկ քաղաքին Թէաթինեան կրօնաւորներուն վարժարանին հայ աշակերները կը բեմադրեն այս գործը, որ գրուած է անշուշտ գրաբար եւ տաղաչափեալ: Լեհաստանի հայ գաղութին մէջ **Հռիփսիմէ** ողբերգութիւնը յաջորդութիւն չունեցաւ:

Մխիթարեան Միաբանութեան դպրոցական ծրագիրով 1753-ին կը սկսի թատրերգութեան տետոլական շարժումը, եւ կը մտնէ հայ ժողովուրդին մէջ, ներգործելով ժողովուրդին դաստիարակութիւնը եւ սէրը գրական այս սեռին հանդէպ: Այս շարժումին գլխաւոր կեդրոնները եղան Պոլիս եւ Թիֆլիս, ուր արեւմտահայ եւ արեւելահայ հասարակութիւններուն զարգացած եւ գիտակից տարրը կ'ապրէր, եւ այս երկու կեդրոններուն մէջ ստեղծուեցան եւ զարգացան երկու տարբեր բեմեր իրենց յատուկ նկարագրով:

Պոլսոյ մէջ տեղի կ'ունենային ժողովրդական զբօսանքներ՝ հտպիտական խաղերու, աճաբարութիւններու, մնջկատակի, եւ մարմնամարզի փերեզակային ներկայացումներով: Այս հետաքրքրութիւնը շահարկելով 1810-ին առաջին անգամ Հ. Մինաս Բժշկեանի նախաձեռնութեամբ եւ հեղինակութեամբ կը բեմադրուի **Արտաշէս** ողբերգութիւնը, Տիւզեան ամիրաներու Գուրու-Չեշմէի պալատին մէջ: 1812-ին Կալկաթայի մէջ կը բեմադրուի **Փախուստ Մեծին Վարդանի** ողբերգութիւնը, որ Ս. Ղազարի վանքին մէջ բեմադրուած էր 1799-ին (գործ՝ Հ. Ղուկաս Ինճիճեանի):

Արեւելահայ բեմը կը ծնի Մոսկուայի մէջ, դարձեալ ուսանողական շրջանակի մէջ, **Հաջի Սուլէյման** տրամայի ներկայացումով, գործ՝ ուսանող Յովհաննէս Գուրգէնբէկեանի, 1858 յունուար 28-ին: Եօթ ամիսներ վերջ Միքայէլ Պատկանեան Թիֆլիսի մէջ կը բեմադրէ իր յօրինած **Սօցիքով** կատակերգութիւնը, զոր Յակոբ Կարինեան խստօրէն կը քննադատէ “Մեղու Հայաստանի” թերթին մէջ, իբրև անպատուաբեր ներկայացում Թիֆլիսի կեանքէն առնուած հայ կնոջ նկարագրին: Պատկանեան կը պատասխանէ իր **Մէկը նշանած, միւսը կին** բեմադրութեամբ, ուր կը ծաղրէ իր հակառակորդին ընտանեկան կեանքը:

*(Քաղուած Հ. Մեսրոպ Վրդ. Ճանաչեանի “Պատմութիւն Արդի Հայ Գրականութեան” հատորէն)*

